ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1951 *Общественные науки*

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀՍՍՌ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԱՌՆԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԷՔՍՊԵԴԻՑԻԱՅԻ 1950 Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1950 թ. Գառնիի հնագիտական էքսպեդիցիան սկսել է իր աշխատանքները սեպտեմբերի 1-ին, ավարտել է հոկտեմբերի 30-ին։

Էքսպեդիցիայի աշխատանքներին մասնակցել են Պատմության ինստիտուտի հնագիտության սեկտորի աշխատակիցները։

Էքսպեդիցիայի աշխատանքները տարվել են մի շարք ուղղություններով.

1. Շարունակվել է ամրոցի պարիսպների բացումը.

2. Ավելի լայն մասշտաբներով, քան 1949 թ. կատարվել են պեղումներ ամրոցի ներսում.

3. Կատարվել են պեղումներ ամրոցից դուրս՝ Գառնիի արևմտյան թաղամասում գտնվող առաջին դարերի գերեզմանոցում, որտեղ պեղվել է 15 դամբարան։

4. Կազմվել են Գառնիի վիմական արձանագրությունների գծագրական տեքստերը տպագրության համար։

ԷՆԵՈԼԻԹԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԳԱՌՆԻՈՒՄ

Նախորդ 1949 թ. Գառնի ամրոցում պատահաբար գտնվեցին մանգաղի կայծքարի ներդիր. ու փայլեցրած կերամիկայի երկու բեկոր, որոնք բնորոշ են Էնեոլիթին, այսինքն՝ այն ժամանակաշրջանին, երբ մարդիկ նոր միայն քարի հետ միասին սկսում էին օգտագործել մետաղը, այն էլ միայն պղինձը։

1950 թ. պեղումների ժամանակ պարզվեց, որ ամրոցի ներսում ստորին կուլտուրական շերտը պատկանում է Էնեոլիթին։ Այդ շերտը հայտնաբերված է ամրոցի կենտրոնական մասում, հյուսիսային պատի մոտ՝ ներսից և հեթանոսական տաճարից ոչ հեռու՝ մի շարք կետերում։

Բավականաչափ հարուստ է այդ շերտի պարունակությունը։ Այստեղ գտնվել են օբսիդիանե և կայծքարե բազմաթիվ գործիքներ, օբսիդաքարի հումք՝ գործիքներ պատրաստելու համար, բազմաթիվ ոսկորե բզեր, Էնեոլիթի համար բնորոշ սև փայլեցրած կավե ամանների՝ կճուճների, թասերի, պնակների բեկորներ, հատկանշական կլոր կանթերով և անծակ ունկերով, բնորոշ օջախների հենակներ և այլն։

Գառնիի Էնեոլիթյան շրջանի բնակիչների երկրագործական զբաղմունքի մասին են վկայում մանգաղի օբսիդաքարի ներդիրները, մակույկաձև աղորիքը, հացահատիկ պահելու կավե խոշոր ամանների բեկորները, վերջապես Հայաստանում Էնեոլիթյան շերտից առաջին անգամ գտնված պղնձե մանգաղը (պահպանված է մանգաղի կեսը կոթատեղով) և սրոցները։

Հատկապես կամենում ենք նշել Էնեոլիթյան շերտում գտնված ծիրանի կորիզի մասին։ Այդ գյուտով ապացուցվում է, որ ծիրանը (գիտական անունը (prunus armeniaca) Հայաստանում հնագույն ժամանակներից հայտնի կուլտուրա է։

Գառնիի հնագույն բնակիչները զբաղվել են նաև անասնապահությամբ, որը նրանց երկրորդ գլխավոր զբաղմունքն էր։ Պեղումների ժամանակ Էնեոլիթյան շերտից հայտաբերվել են, ինչպես պարզել է հնէաբան Ս. Կ. Դալը, խոշոր եղջերավոր անասունների, գոմեշի, ձիու, էշի կամ կուլանի, եղջերուի, խոզի ոսկորներ։

Մանր եղջերավոր անասուններից ընտելացված են եղել ոչխարը, այծը։ Գտնված են նաև վայրի ոչխարի, նապաստակի, լեռնային կաքավի, ինչպես և շատ այլ ոսկորներ, որոնք վկայում են, որ այդ ժամանակ մարդը զբաղվում էր նաև որսորդությամբ։

Արդեն կարելի է վստահորեն ասել, որ հետագա պեղումների հետևանքներից մեկը կլինի այն, որ Գառնիում կրացվի Էնեոլիթյան խոշոր և հարուստ մի բնակավայր։

ՊԱՐՍՊԻ ԲԱՑՈՒՄԸ

Էքսպեդիցիան 1950 թ. շարունակեց Դառնի ամրոցի պարսպի բացումը։ Նախորդ տարվա ընթացքում բացված էր հյուսիսային պարսպապատը դրսի կողմից, հասցվելով մինչև 7-րդ աշտարակը, իսկ ներսից բացված էր միայն պատի վերին եզերքը՝ մինչև 4-րդ աշտարակը։ Շարունակելով այդ աշխատանքը, էքսպեդիցիան դրսից բացել է հյուսիսային պատի մինչև արևմտյան վերջին՝ կամ 10-րդ աշտարակը։ Դրսից 2—7-րդ աշտարակների շրջանում մնում է բացանել պատի միայն ցածի երեք շարքերը (վերևինները բացված են), իսկ ներսից բացված է հյուսիսային պատի եզրագիծը մուտքից մինչև 10-րդ աշտարակը։

Պեղումներից առաջ բավականաչափ լավ երևում էր ամրոցի արևելյան պատը, մի մասում նույնիսկ պատի հիմքերն էին մերկացել։ Սակայն դեպի մուտքը գտնվող մասերում պատի միայն վերևի շարքերն էին երևում, իսկ արևելյան 2-րդ աշտարակը և նրանից մինչև 1-ին աշտարակը գտնվող պատի հետքերը չէին երևում։ Պեղումներով բացված է այդ ամբողջ պատը։ Այսպիսով ամրոցի պարսպի մնացորդները բացված են ամբողջ երկարությամբ, 14 աշտարակների մնացորդներով հանդերձ։

Դառնի ամրոցը կառուցված է Ազատ գետի գեղատեսիլ ձորից վեր խոյաց ողմի եռանկյունաձև հրվանդանի վրա։ Արևելքից այդ հրվանդանի տակ փովում է խաղողի այգիներով և ծառաստաններով ծածկված հսկայական ամֆիթատրոնի տեսք ունեցող Այգեձորը։ Պարսպապատը կառուցված է այս ձորի մուտքի մոտ և դեռևս շատ չխորացող մասի թեք լանջին՝ մոտ 105 մետր երկարությամբ։

Հրվանդանի հարավային կողմը բնականորեն պաշտպանված է Ազատ գետի ձորից գլխապտույտ առաջացնող բարձրությամբ ուղղահայաց կերպով վեր խոյացող ժայռերով և բացարձակապես անմատույց է թշնամու համար։ Բնական պաշտպանությունից զուրկ է եղել ամրոցը հյուսիսից, որ կողմից գտնվում են հարմար մատույցներ թշնամու գրոհների համար։ Բնական է, որ ամրոցի պաշտպանական սիստեմի մեջ հիմնական տեղ պետք է գրավեր հյուսիսային պատը։

Այս պատը, ինչպես և ամրոցի հնագույն պարսպապատն ընդհանրապես կառուցված է լավ տաշված և մշակված բազալտի հսկայական վեմերից, որոնց քաշը հասնում է մինչև 5—6 տոննայի։ Պատի հաստությունն է 4 կանգուն (կամ 2,07 մետր)։ Շարվածքը կատարված է առանց շաղախի (сухая кладка)։ Մաքուր տաշված քարերը շատ լավ կպցված են իրար, դրված ոչ թե ուղղահայաց դիրքով, այլ տափակ կողմերի վրա պառկեցված և դրանով հսկայական ծանր քարերը հարմար կերպով նստած են իրենց տեղում։ Սակայն բերդի շինարարները չեն բավականացել դրանով և քարերն իրար հետ ամրացրել են երկաթե կապերով։ Սրանց երկու ծայրերը ուղիղ փակագծերի ծայրերի նման ծռված են ցած և հագցված քարի վրա հատուկ փորված բներում ու քարի հետ միացված են արճճի ձուլվածքով։

Ճիշտ նույն տեխնիկայով կառուցված են և պարսպի աշտարակները։ Սրանք պատից դուրս ցցվող կոնտրֆորսներ չեն, այլ ամբողջ ծավալով կառուցված քառանկյունի (քառակուսու մոտեցող) աշտարակներ՝ նույնպես կառուցված հսկայական բազալտի վեմերից։ Աշտարակները մինչև որոշ՝ թշնամու համար անհասանելի բարձրությունը, դատարկ չեն եղել, այլ նրանց բռնած ամբողջ մակերեսը՝ 6 × 6,30 մետր, այսինքն՝ մոտ 40 մետր շարված է համատարած կերպով։ Աշտարակի ներսի շարվածքի քարերը նույնպես ընդհուպ մոտեցված են իրար և տեղտեղ մնացած ճեղքերը լցված են կրով, որը երբեք չի կարելի բարերն իրար հետ կապող շաղախ համարել։

Պեղումներով բացված հյուսիսային պատը զարմանք է պատճառում պիտողին իր հաստատունությամբ և մանավանդ աշտարակների մոտիկությամբ։ Աշտարակները այստեղ իրարից հեռու են 10—12 մետր, կարճ տարածության վրա եղել է 10 աշտարակ։

Հզոր այս պարիսպը միանգամայն անառիկ էր իր ժամանակի ռազմական տեխնիկայի համար։ Ամրոցը կարելի էր վերցնել միայն երկար պաշարումով, նրա պաշտպաններին սննդից և ջրից զրկելուց հետո, բայց ոչ պարիսպը բանդելով։

Արևելքում Այգեձորի կողմից բերդը համեմատաբար պաշտպանված է եղել, ուստի այստեղ աշտարակները մեկը մյուսից հեռու են 30—35 մետր և ընդամենը եղել է 4 աշտարակ։

Դառնի ամրոցը գոյություն է ունեցել դեռևս մեր թվ. 1-ին դարի կեսերին։ Նրա մասին խոսում է հռոմայեցի պատմագիր Կորնելիոս Տակիտոսը, 51—52 թ. թ. բերդում կատարված

անցքերի կապակցությամբ։ Սակայն Տակիտոսի մոտ ակնարկ իսկ չկա նրա մասին, թե երբ է կառուցվել բերդը։

Ավելի կարևոր են Մովսես Խորենացու պահպանած տեղեկությունները բերդի մասին։ Խորենացին Դաոնիի կառուցումը վերագրում է առասպելական Հայկի հետնորդներից Գեղամին, որը Հայկից սկսած հինգերորդ սերունդն է հաշվվում։ Արմավիրի կառուցումն էլ Խորենացին վերագրում է Գեղամի պապ Արամայիսին։ Նթե նկատի ունենանք, որ Հայկի հետ կապված առասպելը հորինվել է ուրարտական պետության անկումից հետո՝ հայ ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանում, նաև այն, որ Արմավիրն էլ համարված է մայրաքաղաք, ապա կարելի կլինի Արմավիրի կառուցման առասպելը տեղադրել 4-րդ դարում մեր թվագրությունից առաջ, իսկ դրանից երկու սերունդ հետո մոտավորապես 3-րդ դարում մեր թվ. առաջ տեղադրել Դաոնիի կառուցումը։ Համենայն դեպս Խորենացին բավականաչափ պարզ պատկերացում ունենալով Արտաշես 1-ինի և Արտաշատ մայրաքաղաքի կառուցման ժամանակի մասին, Դաոնիի կառուցումը վերագրում է շատ ավելի վաղ ժամանակաշրջանի։

Հնագիտական տվյալները չեն հակասում Դաոնիի կառուցումը 3-րդ դարին վերագրելուն։ Մենք նկատի ունենք ոչ միայն առանց շաղախի, բայց երկաթե կապերով և արճճի լցվածքով ամրացված պատի շարվածքը, որը Հայաստանում հանդիպում է ուրարտական ժամանակներից ի վեր, այլև ընթացիկ տարում Դաոնի ամրոցից դուրս գտնված շատ ընդարձակ գերեզմանոցը, որտեղ թաղումներ կան, դատելով մի քանի թաղումների նյութերից, սկսած 3-րդ դ. ս. թ. առաջ։

Դաոնիի այս հնագույն ամրոցը կանգուն է եղել մինչև 51—52 թ. թ., սակայն ինչպես երևվում է 1945 թ. ամռանը Դաոնիում գտնված հունարեն արձանագրությունից, դրանից քառորդ դար հետո Տրդատ 1-ը վերականգնել է ամրոցը։ Արդ, հարց է ծագում թե ի՞նչ էր պատահել ամրոցի հետ այդ կարճ ժամանակամիջոցում և ե՞րբ կարող էր նա քանդված լինել, որ հարկ եղավ վերականգնել։ Մեզ հավանական է թվում այս հարցին Կ. Վ. Տրևերի տված պատասխանը, թե Դաոնի ամրոցը ավերել էր Կորբուլոնը Արտաշատ մայրաքաղաքը 59 թ. ավերելու ժամանակ։ Այս ենթադրությունը հավանական է, մանավանդ այն պատճառով, որ այդ ժամանակ Դաոնին սերտորեն կապված էր Արտաշատի հետ և հանդիսանում էր մայրաքաղաքը և Արարատյան դաշտը պաշտպանող զորաջոկատների զորակայանն ու հյուսիսային ֆորպոստը։

Տրդատ 1-ինի շինարարությունը նշանավորում է Դաոնի ամրոցի երկրորդ շինարարական շրջանը, որը հար և նման է նախորդին և կատարված է շինարարական նույն տեխնիկայով ու արվեստով։ Վերևում մեր նկարագրած ամրոցի մնացորդները վերաբերում են այդ երկու շրջաններին, թերևս առավելապես Տրդատի ժամանակներին։

Ինչ էլ լինի, մոտ երկու հազար տարի հնություն ունեցող այս հզոր և անառիկ ամրոցը հայ ճարտարապետության մի աչքի ընկնող կոմպլեքս է, վկայում է հին Հայաստանի բարձր շինարարական արվեստի մասին և նոր լույս է սփռում Դաոնիի նշանավոր հեթանոսական տաճարի հայկական արվեստին պատկանելու հարցի վրա։

Դաոնի ամրոցը միաժամանակ առաջնակարգ նշանակություն ունի ռազմական շինարարության պատմության համար՝ իր հաստաբետ բազալտի պատերով, հզոր աշտարակներով և այլ հատկանիշներով։ Պառսպապատը ուղիղ գիծ, կիսաշրջան կամ աղեղ չի կազմում, թեև տեղանքը դրան չէր խանգարի, այլ բաժանված է պաշտպանական առանձին հատվածների։

Ամրոցի կառուցողները դրան հասել են յուրաքանչյուր պաշտպանական հատվածի եռկու ծայրի աշտարակները ավելի առաջ՝ պատի ընդհանուր գծից դեպի դուրս, և նրանց միջև ընկնող աշտարակները, ընդհակառակը դեպի ներս կառուցելով։ Այսպիսով, պարիսպը գրսից մի քանի գոգավորություններով է բաժանված, ուստի պարսպին ընդհուպ մոտեցող թշնամու ջոկատը չէր կարող օգնել հարևան հատվածում կռվող մյուս ջոկատին, կամ ստանալ նրա օգնությունը։ Իսկ ամրոցի պաշտպանները հնարավորություն են ստանում առանձին-առանձին ոչնչացնել պարսպին ընդհուպ մոտեցած թշնամու ջոկատները, իրարից այնքան մոտ գտնվող մի քանի աշտարակների և պարսպապատի վրայից, անվնաս մնալով թշնամու մյուս ջոկատների հարվածներից և հարկ եղած տեղում կենտրոնացնել իրենց ուժերը։

Ամրոցի պարսպապատի բացումը Դաոնիում ցարդ կատարված պեղումների հիմնական արդյունքն է հանդիսանում։

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՐՏԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԱՄՐՈՑՈՒՄ

Ընթացիկ տարվա պեղումների կարևոր արդյունքներից մեկն էլ պետք է համարել առաջին դարերին պատկանող շերտի հայտնաբերումը ամրոցի ներսում, Ենեոլիթյան շերտից անմիջապես վերև։ Այս շերտը առայժմ գտնված է փոքր տերիտորիայի վրա և առարկայական գյուտերը դեռևս հարուստ չեն, բայց բնորոշ են։ Դրանք սև և կարմրավուն կերամիկայի բեկորներ են, մի դեպքում ջարդված, բայց համարյա ամբողջացող հարթ ափսե, ցած եզերքներով, ապա կն անոթների բեկորներ և կանթեր։ Ամենից ավելի աչքի ընկնող իրը՝ կանացի տերակոտային (կավե) արձանիկի ներբևի մասն է հանդիսանում։ Դժբախտաբար դեռևս գլուխը չի գտնված, սակայն գտնված մասը մշակված է սքանչելի կերպով, հիանալի են տրված զգեստները, մանավանդ քիչ-ինչ ծալած աջ ծնկի վրա։

Այս շերտը հասակակից է Տրդատի ժամանակների պարսպին և Դաոնիի հոչակավոր հեթանոսական տաճարին։ Նույն ժամանակներին է պատկանում նաև մի մարմարե անկանոն գլանաձև քար, որի վրա քանդակված է ճիշտ այնպիսի օրնամենտ, որպիսին հանդիպում է հեթանոսական տաճարի քիվի վրա։ Այս մարմարե քարը հավանաբար մարմարե արձանի պատվանդանի քիվ է։ Հետագա պեղումները ամրոցի ներսում խոստումնալից են նաև առաջին դարերին պատկանող հարուստ նյութերի հայտնաբերման տեսակետից։

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Էքսպեդիցիան ընթացիկ տարում պեղումներ ձեռնարկեց ամրոցից դուրս՝ նրանից քիչ դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք գտնվող առաջին դարերի գերեզմանոցում, որի առկայությունը Էքսպեդիցիային հայտնի էր դեռևս անցյալ տարի այստեղ մի դամբարանի հայտնաբերման և պեղման փաստով։

Ընթացիկ տարում պեղվեց 15 դամբարան և արդյունքները բացառիկ են։

Թաղումները քարարկղային են։[1] Արկղները պատրաստված են սալաքարերից և ծածկված նույնպիսի քարերով։ Գերեզմանն ունի մոտ 1,10—1,30 երկարություն և 0,50—0,70 մետր լայնություն։ Ննջեցյալները թաղված են կուչ եկած վիճակում մեծ մասամբ մի կողքի վրա, գլուխները դեպի արևելք, պատահում են և մեջքի վրա թաղվածներ, ինչպես և գլխով դեպի արևմուտք թաղված մեռելներ։

Դամբարաններում գտնված են մեծ քանակությամբ իրեր և առարկաներ, որոնք պատկանում են առաջին դարերին մեր թվականությունից առաջ և հետո. միայն երկու դամբարանում գտնված իրերը ավելի վաղ են թվում և կարող են վերաբերել 3-րդ դ. մ. թ. ա.։ Դա միանգամայն հնարավոր է, քանի որ գերեզմանոցի միայն այժմ հայտնի մասը մոտ 400 մետր երկարություն և 300 մետր լայնություն ունի, որտեղ եղել են հարյուրավոր թաղումներ։ Այսպիսի մեծ գերեզմանոցը փոքրիկ բնակավայրում կարող էր գոյանալ դարերի ընթացքում։

Մեռելների հետ դրված են մեկական (միայն մի դեպքում երկու) կավե կճուճներ սև կամ կարմիր գույնի։

Դամբարաններում գտնվել են մեծ քանակությամբ այսպես կոչված արցունքի սրվակներ ապակուց։ Դրանցից կան այնպիսիները, որոնք ամֆորայի ձև ունեն և երկու կանթ, կան մի կանթանի փորձասրվակի (կոլբայի) ձևի երկարավիզ անոթներ, որոնցից մեկը 3 ոտքի վրա։ Ապակե սրվակները պատրաստված են փչելու եղանակով, ինչպես և կաղապարի միջոցով, վերջին դեպքում սրվակները իրենց վրա օրնամենտներ են կրում։ Ապակու գույնը քիչ-ինչ կանաչավուն է, հանդիպում է և գունավոր (մուգ դեղին կամ շագանակագույն) մի անոթ։ Տարբերություն կա և մշակման մեջ՝ շատ անոթներ բավականաչափ նուրբ են ու ճաշակով պատրաստված, իսկ փորձասրվակի տեսք ունեցող անոթներից մի քանիսը, մանավանդ երկուսը հաստ են և կոպիտ։ Յուրաքանչյուր գերեզմանում հանդիպում է 2—7 արցունքի սրվակ։

Մեռելների հետ արցունքի սրվակ դնելու մասսայական բնույթը, սրվակների մեծ թիվը, մշակման տեխնիկայի և սրվակների ձևերի բազմազանությունը, ինչպես և Հայաստանում ավե-

---

[1] Դաոնիի այժմյան բնակիչները գտել են և քարի սարկոֆագներ տուֆից և բազալտից։

լի վաղ 6—4-րդ գ. դ. ապակե հուլունքների հայտաբերվելու փաստերը իրավունք են տալիս ասելու, թե այդ ապակե սրվակները տեղական արտադրության արդյունք են։

Բացի սրվակներից, դամբարաններում հայտնաբերվել են ուրիշ շատ իրեր՝ մեծ քանակությամբ հուլունքներ, զանազան ձևի, մեծության, տարբեր է և նրանց նյութը։

Հանդիպում են սարդիոնից, սպիտակ բյուրեղաքարից, սև սաթից, ապակուց, մասսայից և եգիպտական պաստայից պատրաստված հուլունքներ։ Հուլունքներից շատերը իրենց ընդերկայնական ակոսիկներով, կախելու ունկերով, դեպի ներքև նեղացող կոնաձև ծայրերով, նյութով, մշակման ձևերով միանգամայն բնորոշ են առաջին դարերի համար և պատկանում են հելլենիստական անվանված տիպերին։

Կանանց գերեզմաններում հանդիպում են ականջի օղեր, մատանիներ բրոնզից կամ պղնձից։ Մեկ դեպքում ականջի օղերը (մի զույգ) ոսկուց են, կատարված բարձր արվեստով, մակերեսին ուռուցիկ գնդիկներով։

Պարզվում է, որ Դաոնիի բնակչությունը քաղաքային բնակչություն է եղել և հագնվել ու մազերը հարդարել է «հելլենիստական» ձևով։ Կանայք և տղամարդիկ հագուստի վրայից ձգած են ունեցել անթև զգեստ, որի ծայրերը բրոցով ամրացված են եղել ձախ ուսի վրա։ Կմախքներից մի քանիսի ձախ ուսի մոտ գտնվել են այդպիսի բրոնզի բրոցներ։ Կանանց կոշիկները եղել են սանդալներ, որոնք ժապավեններով կապվել են ոտքերին, գտնված են սանդալի ժապավենների մի քանի երկաթե օղեր՝ կմախքների ոտքերի մոտից։ Մազերը հարդարված են եղել հելլենիստական պատկերներին հատուկ ձևով՝ ծոծրակի վրա հավաքված, դա երևում է նրանից, որ մազերը ամրացնելու համար գործածվել են ոսկորի վարսակալներ՝ 10—12 սանտիմետր երկարությամբ։ Դրանք ունեն հերունի ձև՝ հարթ են, գլանաձև, դեպի ծայրը բարակում են, իսկ սյուս ծայրին ունեն փոքրիկ գլխիկ, երբեմն անցքով։ Կանանց գլխի հարդարանքի համար օգտագործվել են նաև բրոնզի կախիչներ (պանդլոկներ), ինչպես և ծովային խեցիներ, բերված Սև, կամ ավելի հավանական է, Միջերկրական ծովի ափերից։

Մի տղամարդու գերեզմանում գոտու մոտ գտնված է մի փոքրիկ երկաթե դաշույն, որը դամբարաններում հայտնաբերված միակ զենքն է։

Ինչպես գերեզմանների տեղը, նույնպես և նրանց մեջ հայտնաբերված իրերն ու առարկաները հնագիտորեն անառարկելի կերպով կարելի է թվագրել առաջին դարերով մեր թվականությունից առաջ և հետո։ Բայց շատ ավելի լավ կերպով են գերեզմանները թվագրվում նրանցից մեկի մեջ գտնված դրամներով։ Դրանք Օգոստոս կայսրի երկու արծաթ դրամներն են, որոնցից մեկը թաղման ծեսի համաձայն դրված էր հանգուցյալի բերանում, իսկ մյուսը՝ ձեռքի մեջ։

Առաջին դամբարանների պեղումները վերին աստիճանի կարևոր են և ցույց են տալիս Հայաստանի այդ ժամանակի բնիկների կենցաղի մի շարք կողմերը, ինչպես և նրանց կուլտուրայի բարձր մակարդակը։ Գտնված իրերը հայկական հելլենիստական կուլտուրայի նշանակալից կենցաղային իրեր են։

ՔԱՌԱԲՍԻԴ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

1950 թ. շարունակվեց 1949 թ. սկսած աշխատանքը 6—7-րդ դարերին պատկանող մի եկեղեցու մնացորդների բացման և ուսումնասիրության ուղղությամբ։

Դա քառաբսիդ, դրսից կլոր, բայց բազմանիստ պարագծով կենտրոնագմբեթ մի եկեղեցի է՝ չորս փոքրիկ սենյակներով չորս աբսիդների արանքում։ Դժբախտաբար այդ եկեղեցին, որը կառուցված է հենթանոսական տաճարին կից, նրա արևմտյան կողմում, շատ վատ է պահպանված և կատարված աշխատանքը դեռևս հնարավորություն չի տալիս վերականգնել նրա հատակագիծը կատարյալ ճշտությամբ։

1—7-րդ դարերին են վերաբերում ամրոցի տարբեր մասերում գտնված ծածկի կղմինդրների բեկորները։

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇԵՐՏԵՐԸ ԱՄՐՈՑՈՒՄ

Ամրոցի ներսում պեղվող շերտերից ամենից ավելի առատ նյութեր տալիս են միջնադարյան շերտերը, ասում ենք շերտեր, որովհետև հանդիպում է միջնադարյան առնվազն երեք շերտ։

Միջնադարյան ամենաներքևի շերտը առաջին դարերին պատկանող շերտից անհամեմատ ավելի վերև է և բնորոշվում է հասարակ կերամիկայի կամ գլազուրած, բայց համատարած դեղին, մուգ դեղին, մուգ կանաչ ֆոն ունեցող գլազուրով, առանց օրնամենտների, կամ օրնամենտը թասի շուրթի վրա շրջան կազմող մի մուգ գիծ է։ Հայտաբերված է և բարձրորակ թափանցիկ ապակի, մի դեպքում՝ փորագրված զարդերով։ Այս շերտը հավանաբար պատկանում է 10--11-րդ դարերին։

Ավելի հարուստ է 12—14-րդ դարերին պատկանող շերտը։ Այստեղ առատությամբ հանդիպում են հասարակ ու գլազուրած ամեն տեսակի, ձևի և դույնի ամանների բեկորներ, ամբողջ կարասներ, կարմրավուն բնորոշ տիպի կարասներ, որոնց գոտիների վրա կան զանազան կենդանիների դաճած պատկերներ։ Հանդիպում է նաև տեղական ու ներմուծված ֆայանսի, չինական սելադոնի, ինչպես և տեղական սելադոնի բեկորներ։

Թեև փոքր թվով, բայց կան և ապակե անոթների բեկորներ։ Ավելի մեծ թվով երևան են գալիս ապակե տարբեր դույնի ու ձևի ապարանջանների բեկորներ։

Մետաղի իրեր ևս շատ են գտնվում, թեև դրանք վատ են պահպանված։ Ջենքերից գտնվել են նետի երկաթե ծայրեր, դանակի և դաշույնի շեղբեր, տեգի ծայր, ձիու և եզան պայտեր, մեխեր և այլ իրեր։

12—14-րդ դարերի շերտում իրեր, առարկաներ շատ մեծ չափերով են գտնվում։ Դրանք մեծ մասամբ տեղում արտադրված իրեր են և ցույց են տալիս թե Գառնին, որն անվանված է գյուղաքաղաք, ուներ զգալի ներքին շուկա և արհեստավորական արտադրություն, գոյացել էին արհեստանոցներ, որոնց մեջ աշխատում էին վարպետներից բացի, ենթավարպետներ, աշակերտներ և արհեստանոցն ուներ իր հատուկ նշանը, օրինակ՝ կավագործների նշանները, որոնք դրոշմվում էին չնարակած ամանների հատակին։ Գառնիում գտնված են բազմաթիվ այդպիսի նշաններ կրող ամաններ, նույն նշանի կրկնություններով, ինչպես և տարբեր նշաններ ունեցողները։

Վիմական արձանագրություններն էլ վկայում են, որ Գառնին քաղաք էր, որտեղ կային շուկայի հետ կապված պաշտոնյաներ՝ տամղադարներ, ու մաքս (բաժ) գանձողներ, որոնք հավաքում էին հարկերը առևտուր անողներից, արհեստավորներից։ Գառնիի մի արձանագրության մեջ հիշատակված է նաև գինուց բաժ գանձելու մասին։ Պատահական չէ, որ հենց այս 12—14-րդ դարերի շերտում գտնվում են զգալի թվով դրամներ, որոնց թվում կան սելջուկյան, մոնղոլական, բյուզանդական և վրացական դրամներ։ Ամրոցի ներսում մի քանի տեղ բացվել են 12—14-րդ դարերին պատկանող շենքերի մնացորդներ։ Մի դեպքում դա բնակարանի մի ամբողջ կոմպլեքս է՝ շարված անտաշ ու տաշ քարերից՝ ցեխի շաղախով, բայց վերին աստիճանի կանոնավոր շարվածքով։ Բնակարանն ունի ոչ մեծ դահլիճ, որն ըստ երևույթին ունեցել է փայտյա հարթ ծածկ հենված սյուների վրա։ Դահլիճի կողքերին կան մի քանի սենյակների մնացորդներ (շենքը դեռևս լրիվ չի բացված)։ Այս շենքի մոտ գտնվել են շքաղյուսներ, որոնք ութանկյունի աստղի ձև ունեն, չնարակի վրա ձկան պատկերներ և այլ օրնամենտներ են հանդիպում և վառ գույների զուգակցություններ։ Այս շքաղյուսները հար և նման են Անիում գտնվածներին, որոնք վերագրված են 13-րդ դարին։

Ամրոցի ներսում ամենավերին շերտը պատկանում է 15—17-րդ դարերին։ Այս շերտում հայտնաբերված են ավելի մեծ թվով բնակարաններ, որոնք համարյա կպած են իրար և վերին աստիճանի աղքատիկ են՝ կառուցված անտաշ տաշ քարերով, ցեխի շաղախով, երբեմն էլ պատի շարվածքի մեջ մի կերպ հարմարեցված սրբատաշ ճարտարապետական դետալներով, որոնք վերցված են հին շենքերից։

15—17-րդ դարերում անընդհատ ընդհարումներից ու ասպատակություններից Գառնի ավանի բնակչության մեծ մասը պատսպարվել էր ամրոցում, խիտ կերպով բնակեցնելով այն։ Շենքեր էին կառուցվել անգամ արդեն քանդված, բայքայված բերդապարիսպների վրա։ Հյուսիսային պարիսպների միայն ներքևի անշաղախ մեծ բազալտի վեմերից կառուցված մի քանի շարքերը 4—5 մետր բարձրությամբ դեռևս կարող էին պաշտպանել ամրոցում պատսպարվածներին։ Իսկ մյուս կողմերից բերդը մնում էր անառիկ պաշտպանված լինելով արևելյան՝ ավելի լավ պահպանված պատով և Ազատ գետի ձորի անմատույց անդունդով։

Սակայն պեղումները լրացնող մատենագրական տեղեկությունները ցույց են տալիս, որ ամրոցի պարիսպներն էլ չեն փրկել նրա բնակչությանը թուրքմենների, պարսիկների և թյուրքերի անընդհատ կրկնվող ասպատակություններից, ավարից ու գերեվարությունից։ Այս ամենը

մեծ չափերով անդրադարձել էին Գառնիի բնակչության նյութական վիճակի վրա և թշվառության դուռն էին հասցրել նրանց։

Միանգամայն բնական է, որ վերին շերտի տները բնակչության համար մի կերպ հարմարեցված հյուղեր են՝ զուրկ ճարտարապետական արվեստից ու հարդարանքներից, իսկ նրանց մեջ գտնվող իրերն աչքի են ընկնում ցածր որակով և աղքատիկությամբ։ Այս շերտում ամենից ավելի հանդիպում են հատուկ կերամիկայի բեկորներ, երբեմն էլ ուշ ժամանակի համար բնորոշ ջնարակած կերամիկայի բեկորներ։ Բնակարաններում կան 2—4 թոնիրներ, կարասներ, հորեր։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ իսկապես թոնիրներ բնակարաններում եղել են 1—2 հատ, իսկ մյուսները թոնրաձև պահեստներ են եղել՝ հացահատիկ, մանավանդ ալյուր պահելու համար, որպիսի սովորությունը դեռևս պահպանվել է Գառնիի դիմաց, գետի մյուս ափին գտնվող Ալի-Կրբխ՝ նախկին Երերոն գյուղում։ Կարասներն ու հորերը նույնպես ծառայել են որպես պահեստատեղի, առավելապես գինու համար։

Սակայն, պետք է նկատել, որ գաճով սվաղած գինու հորերի մեծագույն մասը (ցարդ բացված է 10 այդպիսի հոր) պատկանում է ավելի վաղ, այն է 12—14-րդ դարերի շերտին։

Պեղումները ցույց տվեցին, որ այս վերին շերտի բնակարանները կողոպտված, ավերված են և բնակչությունը գերի է քշված, թողնելով թոնրաձև պահեստների մեջ ունեցած ալյուրի աղքատիկ պաշարները (գտնված է 20—50 կիլոգրամի չափ ալյուր մի կարասի և երկու թոնրաձև պահեստի մեջ)։

Իրենց բովանդակությամբ, ինչպես և ժամանակագրությամբ վերին աստիճանի կարևոր են Գառնիի միջնադարյան վիմական արձանագրությունները, որոնք էքսպեդիցիայի կողմից հրատարակության են պատրաստվում և կհանձնվեն տպագրության 1951 թվի ընթացքում։

Եզրափակելով այս համառոտ նախնական հաշվետվությունը պետք է ասել, որ Գառնին Հայաստանի կարևորագույն հնագիտական օբեկտներից մեկն է, որը պարունակում է չորս հազարամյակի թևերին փռվող հնագիտական նյութեր։ Կատարված պեղումներն արդեն հարստացրել են մեր իմացությունները հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի, կենցաղի վերաբերյալ մի շարք հարցերում և խոստանում են ավելի մեծ քանակությամբ ու ավելի կարևոր նյութեր տալ հետագա պեղումների ժամանակ։

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Գառնիի հնագիտական էքսպեդիցիայի պետ)